

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

106

Խմբագրական

ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարությունը կստեղծի Համահայկական երիտասարդական խորհրդարան

Հայոց ցեղասպանություն. թուրքերը հոգնել են լռելուց

Սփյուռքի ներկայացուցիչներ

Միլվա Զարմաթյան. Աստղային Փայրի Վարպետը

Վերատպություններ

4.000 հայկական հուշարձանի և հայերեն խոսող միակ հնդկահայի մասին

Հայ Կապոյտ Խաչի Ազգային Զուարեան վարժարանի 'Հայաստան Ուշագլեան' մանկապարտեզի նորակառուց դասարաններու բացում

Խմբագրական



ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2011-03-26

2010թ. հոկտեմբերի 16-ին Գործիսում Սփյուռքի հայկական լրատվամիջոցն էրի ներկայացուցիչների առջև նախագահ Մերժ

Սարգսյանի ելույթից հետո

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար, ակադեմիկոս Ռամիզ Մեխթիևի անունից այդ երկրի էլեկտրոնային լրատվամիջոցներում (Trend.az, Day.az և այլն) հոկտեմբերի 29-ին տեղադրվեց և ապա առանձին գրքույկի վերածվեց 'Գործիս-2010. ամսուրդի թատրոնի տարեշրջանը¹՝ վերնագիրը կրող մի ծավալուն 'տեղեկանք', որը փաստորեն² ՀՀ նախագահի առաջադրած պատմագիտական փաստարկների 'պաշտոնական պատաս խանն' է՝ Այն սկսվում է քաղաքական մեղադրանքներով և ավարտվում թավախանի ընդարձակ պատմագիտական շարադրանքով, ինչն անկասկած, Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության շուրջ ադրբեջանական նախորդ կեղծարարությունների խտացված տարբերակն է:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հ. Հարությունյանի հոդվածն ամբողջությամբ <Հայերն այսօր>-ը ներկայացնում է կից ֆայլով:



ՀՀ սփյուռքի նախարարությունը կատեղծի Համահայկական երիտասարդական խորհրդարան

2011-03-24

«Ինչպես յուրաքանչյուր կազմակերպության կանոնադրություն, այնպես էլ Համահայկական երիտասարդական խորհրդարանի կանոնադրությունը, սահմանում է գործունեության կարգը,

շրջանակներն ու ձևերը: Կանոնակարգի վերջնական մշակման համար ներկայումս նախագիծն ուղարկում ենք հայկական երիտասարդական կազմակերպություններին՝ ակնկալելով նրանց առաջարկությունները: Չուզահեռ ստեղծում ենք նաև հայկական երիտասարդական կազմակերպությունների սովյալների բազա՝ եղածին հավելելով բոլոր այն կազմակերպությունների սովյալները, որոնք ընդգրկվելու են խորհրդարանի կազմում»,- տեղեկացրեց ՀՀ սփյուռքի նախարարության Համահայկական ծրագրերի վարչության պետ Ատոմ Մխիթարյանը: Նա նաև մանրամասնեց, որ համաձայն կանոնադրության նախագծի, Համահայկական երիտասարդական խորհրդարանում ընդգրկվելու են ոչ թե անհատ երիտասարդներ, այլ հայկական երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ, եւ յուրաքանչյուր կազմակերպություն՝ լինի փոքրաթիվ համայնքի, թե համահայկական, խորհրդարանում հանդես է գալու մեկ ձայնի իրավունքով: Անդամակցության համար ոչ մի սահմանափակում չի լինելու:

Համահայկական երիտասարդական խորհրդարանի ձևավորմանն ու գործունեությանը մասնակցելու համար բավական է օրենքի պահանջին համապատասխան գրանցված հասարակական կազմակերպության անդամ լինել: Իսկ պատվիրակման հարցը յուրաքանչյուր կազմակերպության որոշելիքն է: Ի դեպ, անդամակցող կազմակերպությունների թիվը եւս սահմանափակումների չի ենթարկվի: Քննարկվելիք թեմաների առնչությամբ արդեն կան առաջարկներ եւ հստակ պահանջ՝ խորհրդարանում ներկայացված կազմակերպությունները պետք է ստեղծեն քննարկումների, ծանոթությունների հետաքրքրական դաշտը: Առաջին քննարկումը Համահայկական երիտասարդական խորհրդարանի կանոնադրության մշակման շուրջ է. մյուսը Հայաստանում երիտասարդ առաջնորդների

երկշաբաթյա ամառային դպրոցի կազմակերպման հայեցակարգի քննարկումը կլինի: Կազմակերպիչներն ասվածից գատ ակնկալում են նաև յուրաքանչյուր կազմակերպություններից իր խնդիրների կամ համահայկական հարցերի վերաբերյալ հարցադրումներ, քննարկում, որոշումների կայացում:

«Այս տարվա ընթացքում չունենք նախատեսած ֆինանսական միջոցներ, որպեսզի խորհրդարանը ռեալ հավաքենք, բայց մյուս տարվա համար, եթե խորհրդարանի գոյությունը ապացուցի գործունեության անհրաժեշտությունն ու արդյունավետությունը, ապա կհրավիրենք խորհրդարանի իրական նիստ: Իսկ խորհրդարանի աշխատանքներին ակտիվորեն մասնակցած ներկայացուցիչներին կհրավիրենք մասնակցելու նաև ՀՀ սփյուռքի նախարարության մյուս համահայկական երիտասարդական ծրագրերին ու հավաքներին : Իսկ մինչ այդ, խորհրդարանը կգործի վիրտուալ տիրույթում եւ քննարկումները կկազմակերպվեն համացանցի միջոցով», - տեղեկացրեց Ատոմ Մխիթարյանը եւ ընդգծեց, որ քննարկում անցած նախագծերը ներկայացվելու են նաև ՀՀ պետական մարմիններին:



Հայոց ցեղասպանություն. թուրքերը հոգնել են լռելուց

2011-03-23

1915 թվականի իրադարձությունների մասին հայտարարությունները (Հայոց ցեղասպանությունը Ցեղասպանություն կոչելը դեռևս վտանգավոր է) գնալով ավելի հաճախ և ավելի բարձր են հնչում, այդ խոսքերի ենթատեքստում ակնհայտ է Ցեղասպանության ճանաչման չարտահայտված

անհրաժեշտությունը: Գնալով ավելի շատ թուրք լրագրողներ ու գրողներ են գրում Ցեղասպանության մասին, և նրանց գրքերը սրընթաց կերպով վաճառվում են: Վերջին օրինակը թուրք գրող Ջուֆու Լիվանեյի «Սերենադ» վեպն է, որում հիշատակվում է Հայոց ցեղասպանությունը և որը Թուրքիայում բեսթսելլեր է դարձել: Երեք օրվա ընթացքում գրքի 50 000 օրինակ է վաճառվել: Վեպը պատմում է ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև Հոլոքոստի ու քրդերի մասին:

Թուրք ժողովուրդը, համենայնդեպս, նրա մի հատվածը հոգնել է լռելուց կամ էլ սկսել է հասկանալ, որ ազգության հայրերն այնքան էլ ճիշտ չեն ներկայացրել այն ամենը, ինչ իրականում տեղի է ունեցել 19-20-րդ դարերի սահմանին:

Որոշներն իրենց անկեղծության համար իրենց կյանքով են վճարել, ինչպես հայ-թուրքական «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը, որը սպանվեց 2007 թվականի հունվարի 19-ին խմբագրության շենքի դիմաց: Մակայն նա ունեցավ բազմաթիվ հետևորդներ. 2008 թվականի դեկտեմբերին թուրք մտավորականության ավելի քան 200 ներկայացուցիչներ նախաձեռնեցին «Հայե՛ր, ներե՛ք մեզ» քարոզարշավը՝ ինտերնետում տեղակայելով համապատասխան հանրագիրը: Այդ քարոզարշավը վտարեց Ցեղասպանության հետ կապված տասնամյակներով սերմանվող վախը: Հանրագրի ներքո ստորագրեցին մոտ 30 հազար մարդ: Եվ դա օրինաչափ է. մի ժողովուրդ, որին երկար տարիներ ստիպում են լռել, վաղ, թե ուշ կհոգնի լռելուց:

Միջուռքի ներկայացուցիչներ



Սիլվա Չարմարչեան.

Աստղային Փայլքի

Վարպետը

2011-03-21

Շեր, Դայանա Ռոս, Դոլի Փարթոն, Ջենիֆեր
Լոպես, Մայքլ եւ Ջանեթ Ջեքսոններ, Ռիհաննա,
Ալիսան հրաշքների աշխարհում, «Օշենս Իլեւըն»
(Oceans Eleven) հոլիվուդեան հարիւրաւոր յայտնի
անուններ՝ դերասաններ, երգիչներ,
արուեստագէտներ, ֆիլմեր, Լաս Վեգասեան ու
ճամփորդական նաւերի շքեղ շոուներ այս բոլորը
միաւորում են Սիլվիաս Կոստիւմս (Silvia's
Costumes) հագուստների պատրաստման սրահում:
Հոլիվուդի սրտում գործող այս սրահը շուրջ 30
տարի ապահովում է ամերիկեան շոու բիզնեսի
փայլքն ու շքեղութիւնը՝ հանդիսանալով ոլորտի
հանրայայտ դիզայներների վստահելի ու
լաւագոյն գործընկերը, որոնց յաջողութեան
առիւծի բաժինը ապահովում են Սիլվիաս
Կոստիւմսի հմուտ դերձակները:

«Յաջողութիւնը հնարաւոր է դարձել անձնուէր
աշխատանքի շնորհիւ», գործի կայացումն այսպէս

Է մեկնաբանում Սիլվիաս Կոստիւմսի հիմնադիր
ու տնօրէն Սիլվա Չաքմաքչեանը:

Տիկին Սիլվայի հետ հանդիպումս նրա
«բազմագոյն ու բազմաձեւ արուեստանոցում» էր,
որտեղից էլ սկսում է ամերիկեան աստղային
փայլքը: Սրահում շրջելիս համակում ես
գեղեցիկի աննկարագրելի զգացումով.
բազմաթիւ ոճերի հագուստներ՝ դասականից
ժամանակակից, սպորտային, ու երեկոյեան, եւ
նրանցից իւրաքանչիւրն իր պատմութիւնն ունի:
Այցելութեանս պահին, տիկին Սիլվայի
ղեկավարութեամբ սրահի դերձակները,
ամերիկացի դիզայների հետ միասին, աշխատում
էին հերթական աստղային պատուէրի, այս
անգամ՝ հոլիվուդեան յայտնի դերասան Ուիլ
Սմիթի դասեր շոու ծրագրի համար:

«Սիլվիաս Կոստիւմսի արտադրանքը
լաւագոյններից է, եւ եթէ յաւելեմ Սիլվայի շնորհիւ
այս սրահում ստեղծուած ջերմ մթնոլորտը՝ կարող
եմ համարձակօրէն փաստել, որ սա ոլորտի
դիզայներների ամենասիրելի վայրերից է»,
խոստովանում է հոլիվուդեան դիզայներ Հիլարի
Օլսը:

Միլվա Չաքմաքչեանն իր ուղին ընտրել է պատահաբար՝ ընկերոջն օգնելու արդիւնքում.

ԱՄԵՐԻԿԱ

Միլվա Չաքմաքչեանը ծնուել է Լիբանանում, մանկութիւնն անցկացրել Հայաստանում մինչ 1967 թուականը, երբ ընտանիքով տեղափոխուում են Միացեալ Նահանգներ: Միլվան արագօրէն յարմարում է նոր իրականութեանը, որտեղ, ըստ նրա աշխատասէր մարդու համար ստեղծուած էին յաջողութեան հասնելու բոլոր պայմանները: Իր առաջին աշխատավայրում՝ Bank of America, Միլվային խոստումնալից ապագայ էր սպասում, սակայն մարդկանց անձնուիրաբար օգնելու նրա պատրաստակամութիւնը փոխում է նրա կեանքի ուղին:

«Հայ ընկերներիցս մէկը վերջապէս աշխատանքի առաջարկ էր ստացել, սակայն անգլերէնի հետ խնդիր ուներ: Որոշեցի օգնել նրան յաղթահարելու այդ խնդիրը եւ թողնելով բանկիս աշխատանքը միացայ նրան», դէպի նոր աշխարհ իր պատմութիւնը յիշում է տիկին Միլվան:

Նա տարւում է հազուստի ստեղծման սրահում ստեղծագործական բնոյթի նոր աշխատանքով, ինչն էլ որոշում է Սիլվա Չաքմաքչեանի ապագան: Շուտով, նա աշխատանքի առաջարկ է ստանում թատերական խոշոր կազմակերպութիւններից մէկում՝ Center Theatre Group-ում, որպէս հազուստի սրահի ղեկավար: Աշխատանքային ձեռքբերումներից ոգեւորուած Սիլվա Չաքմաքչեանը որոշում է ստեղծել սեփական գործը:

1979 թուականին Սիլվիաս Կոստիւման իր յաղթարշաւն է սկսում շուրջ բիզնեսում մեծ մրցակցութիւն ունեցող այս ոլորտում:

«Հանրայայտ դիզայներների հետ համագործակցութիւնների արդիւնքում սկսեցինք հազուստներ պատրաստել հոլիվուդեան աստղերի համար, որոնց թիւն այժմ անհաշուելի է», նշում է Սիլվա Չաքմաքչեանը:

Ժամանակի ընթացքում Սիլվիաս Կոստիւմսի յաճախորդների ցանկն ընդլայնւում է՝ ներգրաւուելով թատրոնի, կինոյի, հեռուստատեսութեան ոլորտները, Լաս Վեգասի

շքեղ ու հանրայայտ շոուները (Jubilee, O), նաւային ճամփորդութիւնների ներկայացումները (Princess Cruises, Holland American Cruises, Royal Carribean Cruises), յայտնի մոդելային տներ (Polo Ralph Lauren) (Nike), հեղինակաւոր մրցանակաբաշխութիւններ (MTV Awards).

«Յաճախորդների հետ ազնուութիւն, ճշդապահութիւն, անձնուէր աշխատանք, այս յատկանիշներն են ոլորտում յաջողութեան հասնելու նախապայմանները», նշում է Սիլվա Չաքմաքչեանը: Նրա այս յատկանիշները բարձր են գնահատում գործընկերները, որոնցից շատերը համագործակցութեան արդիւնքում այնուհետեւ բարեկամանում են տիկին Սիլվայի հետ:

«Սիլվան ոչ միայն իմ սիրելի ընկերն է, նաեւ՝ ինձ հանդիպած մարդկանցից ամենաբացառիկը: Յաղթահարելով հսկայական դժ-ուարութիւններ, նա կարողացել է իրականացնել լեգենդար գործունէութիւն դիզայնի ու կարի աշխարհում՝ իր բնական ունակութիւններով ու ձեռներէցի տաղանդով յաջողելով իր բոլոր նախաձեռնութիւններում», Սիլվա Չաքմաքչեանի

մասին գրում է ամերիկեան կինոյի
դերասանուհիներից Իւետ Միմին:

Միլվիաս Կոստիւմսի կայացումը մեծապէս
պայմանաւորուած է սրահի հմուտ դերձակների
աշխատանքով, նշում է տիկին Միլվան՝
իւրաքանչիւր աշխատակցին համարելով իրեն
հարազատ:

«Սրահում հաւաքուել են տարբեր երկրների
հայեր՝ ստեղծելով իւրատեսակ կոլորիտ, մի մեծ
հայկական ընտանիք, որի կարգախօսը սերն ու
համերաշխութիւնն է», փաստում է սրահի
տիրուհին՝ ընդգծելով աշխատակիցների
հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնը եւ
նշելով իր գործընկեր ու բարեկամ Յասմիկ
Եալենեանի մասին, ով իր հետ է եղել
գործունէութեան ողջ ընթացքում:

ԻՆՔՆՈՒԹԻԻՆ

Միլվա Չաքմաքչեանի ծանրաբեռնուած
աշխատանքը մեծ մրցակցութիւն ունեցող
ոլորտում երբեւէ չի խանգարել նրան մեծապէս
ներգրաւուած լինելու հայ համայնքի կեանքում:

Միլվա Չաքմաքչեանը մշտապես բարոյական եւ նիւթական աջակցութիւն է ցուցաբերում բոլոր հայկական կազմակերպութիւններին, հայ եկեղեցիներին, իրեն դիմած իւրաքանչիւր անհատի: Հայ քրիստոնէային վայել, տիկին Միլվան երբեք չի բարձրաձայնել իր անհամար բարեգործութիւնների մասին եւ միայն ընկերներն են երբեմն յիշատակում դրանք. Փետրուարի 26ին ներկայ էի ՀՕՄԻ «Միփան» մասնաճիւղի կազմակերպած նորաձեւութեան ցուցադրութեանը, որի գլխաւոր հովանաւորներից մէկը Միլվա Չաքմաքչեանն էր:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍԵԼԻՄ ՀԱՍԱԿՍ ԾԱՂԿՈՒՄ Է

Միլվա Չաքմաքչեանն անմասն չէ նաեւ հայրենիքի զարգացման գործում: Հայաստանի անկախացումից յետոյ, 90ականների սկզբին նա շտապում է հայրենիք՝ այնտեղ ստեղծելով կարուձեւի սրահ, հագուստի խանութ՝ ստեղծելով հարիւրաւոր աշխատատեղեր: Տնտեսական դաշտի անկայունութեան պատճառով սակայն, հայաստանեան գործունէութիւնը չի շարունակում, բայց տիկին Միլվան գտնում է հայրենակիցներին օգտակար լինելու այլ ձեւ: 2009

թուականին նա հիմնադրում է Գառնի
բարեգործական կազմակերպությունը,
որ ստեղծման կարճ ժամանակահատուածում
հասցրել է մեծ քանակութեամբ հագուստ առաքել
հայ կարիքաւոր ընտանիքներին, անհատներին՝
Հայ աւետարանչական եկեղեցու(AMAA),
Առաքելութիւն Հայաստանին (Mission Armenia)
կազմակերպութիւնների միջոցով:

ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՒ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՈՒԺԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՄ
ԸՆՏԱՆԻՔԻՑՍ

Աշխատանքում արձանագրելով աննախադէպ
յաջողութիւններ, Սիլվա Չաքմաքչեանը երբեք
գործը չի գերադասել ընտանիքից:

«Շնորհակալ եմ ծնողներիս, որ փոխանցել են
կեանքի բանաձեւը, սովորեցրել աշխատելու
արուեստը, ինչի արդիւնքում կերտել եմ իմ
պատմութիւնը, ստեղծել իմ ընտանիքը», նշում է
տիկին Սիլվան: Նա իր երկու զաւակներին հայեցի
է մեծացրել՝ նաեւ փոխանցելով համամարդկային
արժէքները:

«Որդիս ու դուստրս, նաեւ չորս թոռնիկներս հպարտ են իրենց հայկական ինքնութեամբ, միաժամանակ Ամերիկայի արժանի քաղաքացիներ են», ուրախութեամբ փաստում է գեղեցիկ ընտանիքի մայրն ու տատիկը:

«Հոյակապ պաշտօն է մարդ լինելն աշխարհում: Դու հիանալի ես «պաշտօնավարում: Թանկագին Սիլվա, Քեզ սիրում են շրջապատում, հեռաւոր Լոս Անջելեսում եւ Հայաստանում: Դու քո վարքագծով, կեցուածքով, անգուգական կազմակերպչական շնորհքով, մարդկային պարզ ու անմիջական բնաւորութեամբ, անցած ուղիով, սկզբունքային վարքով ու բարքով արժանի ես ընդօրինակման, յատկապէս երիտասարդութեան համար», նշուած է ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի՝ Սիլվա Չաքմաքչեանին ուղղուած նամակում:

«Եթէ կա՛յ ցանկութիւն, ստեղծում է նաեւ ճանապարհ, փակուղիներ չկան, միշտ հնարաւոր է ելք գտնել», այսպիսին է կայացած հայ կնոջ պատգամը, որ իր օրինակով է հաստատում խօսքը.

Յ.Գ. Բիզնեսում յաջողութիւնների եւ համայնքում ու հայրենիքում իր ներդրումների համար, Հայ-

ամերիկեան առևտրի պալատը Միլվա
Չաքմաքչեանին արժանացրել է «բիզնեսում
Լաւագոյն կին» կոչմանը: Մրցանակը կը տրուի
Մարտի 26ին նախատեսուած հանդիսաւոր
երեկոյի ժամանակ:

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ

Վերատպություններ



**4.000 հայկական
հուշարձանի և հայերեն
խոսող միակ հնդկահայի**

մասին

2011-03-25

Խումբը չափագրել է թվով 10 բոլոր կանգուն եկեղեցիները, տեսել ու հաշվառել է մոտ 4.000 միավոր հուշարձան: «Այդ 4.000 հուշարձանը անմահացրինք 5.200 լուսանկարով: 90 %-ով, գուցե և ավելի մեզ հաջողվեց Հնդկաստանի հայկական հուշարձանները տեսնել», - այսօրվա մամուլի ասուլիսում ասաց Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ Սամվել Կարապետյանը:

Հնդկաստան ուղևորությունը 7 հազար եվրո է արժեցել: Մշակույթի նախարարությունը և անցյալ, և այս և առաջիկա 2 տարում տարեկան 60 մլն եվրո է հատկացնելու հիմնադրամին՝ արտերկրի հայկական հուշարձանները հաշվառելու և վկայագրելու համար: Հիմնադրամն ինքն է նախընտրել սկսել Հնդկաստանից:

Նախատեսվում է, որ մեկ տարվա ընթացքում հիմնադրամը նախ կպատրաստի ֆիլմ, ապա կհրատարակի ծավալուն հատոր՝ Հնդկաստանի հայկական հուշարձանների վերաբերյալ: Աշխատելու օրերին արշավախմբին օգնել են Հնդկաստանում Հայաստանի դեսպան Արա Հակոբյանը, նրա օգնականները և հնդկահայերի հովիվ, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հայր Խորենը: Ավելի քան 20-ական մլն բնակչություն ունեցող քաղաքներում դժվար է հայկական հուշարձան գտնել: «Հայկական» բառը ոչինչ չի ասում հնդիկներին: Երբեմն հնդիկ տաքսիստները Armenia բառը շփոթում էին «army» (բանակ) բառի հետ և Սամվել Կարապետյանի խմբին առաջնորդում Առաջին և Երկրորդ աշխարհամարտերում զոհված բրիտանացի զինվորների գերեզմաններ: Խումբն այցելել է Հնդկաստանի բոլոր այն վայրերը, որտեղ եղել են հայկական գաղութներ: Երթուղին հետևյալն է եղել. մայրաքաղաք Դելի, նախկին մայրաքաղաք Ագրա, ավելի հարավ՝ Գվալյոր, այնուհետև՝ Վարանասի (նախկին Բենարես) և Կալկաթա: Կալկաթա քաղաքն ունի 3 հայկական եկեղեցի՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Աստվածածին և մայր եկեղեցին՝ Սբ. Նազարեթը:

Հայաշատ Կալկաթայում գործում է Հայոց մարդասիրական ճեմարանը, որն ունի հայկական թեքում: Ճեմարանում 90 հայ աշակերտ է սովորում, որոնք եկել են Իրանից, Իրաքից, Հայաստանից:

Այնուհետև արշավախումբը եղել է Կալկաթայից հյուսիս գտնվող Չինսուրահ քաղաքում, Բանգլադեշի սահմանին գտնվող Մուշիդաբադ քաղաքին հարևան Սեյդաբադ գյուղում, այցելել է Հնդկաստանի հարավում գտնվող Հեյդաբադ, Մադրաս, Կոչի, Մումբայ (Բոմբեյ) և վերջում՝ Սուրաթ քաղաք:

Արշավախմբի տեսած ամենահին հուշարձանը 1611 թվականով թվագրվող խաչքար է եղել Ագրայի հայկական գերեզմանոցում: 1600-ականների գերեզմանաքարեր կային նաև Սուրաթի գերեզմանոցում, Մադրասում և Կալկաթայի Սբ. Նազարեթ եկեղեցու բակում: Հնդկաստանի խաչքարերն ունեն պարզ հորինվածք և շատ տարբեր են դարի կտրվածքով մեր պատկերացրած ու ճանաչած խաչքարերից:

Սամվել Կարապետյանի խոսքերով՝ հնդկահայ համայնքի հուշարձանների տեսականին շատ

աղքատիկ է: Եղածները հիմնականում գերեզմանոցներ են՝ տապանաքարերով, նաև հազվագյուտ խաչքարերով, և եկեղեցիներ: Հայերը Հնդկաստանում ունեցել են նաև բնակելի տներ, դպրոցներ: Բայց քանի որ 200 տարի է, այդ շենքերում հայեր չեն ապրում, դժվար է գտնել որևէ մեկի, ով կասի. «Այս շենքը հայկական է»: Գրեթե բոլոր եկեղեցիների շինարարական արձանագրությունները պահպանվել են: Ամենահին արձանագրությունները թվագրվում էին 17-րդ դարով: Հիմնականում 18-19-րդ դարի 1-ին կեսի արձանագրություններ են:

«Հնդկաստանում և առհասարակ գաղթավայրերում մենք չենք ստեղծել այնպիսի մի արժեք, որ բնօրրանում ստեղծված նույնիսկ միջին կարգի մի հուշարձանի հետ համեմատվի: Գաղթավայրերը ազգային մշակույթի իմաստով ընկած են: Սրանք շատ ավելի ազդեցություններ են կրում: Մեր չափագրած 10 եկեղեցիները եթե չիմանաք, որ հայկական է, գլխի էլ չեք ընկնի, որ հայկական է: Արտաքին ձևերը ձեզ չեն հուշելու, որ սրանք հայ ճարտարապետության հուշարձաններ են: Կրում են ավելի եվրոպական, բրիտանական, կաթոլիկ եկեղեցու, նաև տեղային ազդեցություն», -

ասաց Սամվել Կարապետյանը:

Նա հավելեց, որ Գվալյոր քաղաքի հայկական գերեզմանատունը նման է շինական սրբավայրի. հայ տապանատները շինական հատուկ տանիքներ ունեն, թեև ներսում շիրմաքարերը հայերեն արձանագրություններ ունեն (19-րդ դարի առաջին կես):

Խաչատուր Չաչան միակ հնդկահայն է, ով հայերեն է խոսում

«Փորձեցինք գտնել այն, ինչ պահպանվել էր: Հիշատակածս բոլոր քաղաքների շարքի մեջ այսօրվա դրությամբ հայեր ապրում են միայն Կալկաթայում` շուրջ 200 շունչ», - ասաց Սամվել Կարապետյանը:

Նրա խոսքերով` այդ 200 հնդկահայից (ոչ թե Հնդկաստան տեղափոխված իրանահայերից, իրաքահայերից կամ հայաստանցիներից) միակ մարդը, ով կարողանում է հայերեն խոսել, 80-ն անց մի ծերունի էր` Խաչատուր Չաչա անունով: Նրա երկու ծնողն էլ հայ է: Խաչատուր Չաչան ապրում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից հայկական ծերանոցում:

«Իր լուսամուտից նայում էր Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գերեզմանոցին, արդեն տեղը ուներ

ապահոված: Եվ ասում էր. «Հիմա այստեղից ես տեսնում եմ իմ տեղը, ուր որ պիտի ամփոփվեմ, և տեղը լավ եմ ընտրել, որովհետև այդտեղից էլ երևում է լուսամուտս»», - ասաց Սամվել Կարապետյանը:

Հնդկաստանի հայերը հիմնականում խոսում են կամ անգլերեն, կամ հինդու լեզուներով: Սամվել Կարապետյանին զարմացրել է այն, որ Հնդկաստանի տարբեր նահանգների պետական լեզուն և գիրը տարբեր են: Տարբեր նահանգներում հնդիկները խոսում ու գրում են անգլերենով և հինդու լեզվի որևէ ճյուղով:

Սուրաթի գերեզմանոցը բաժանված է 2 մասի՝ հայկական և գերմանական: «Գերմանական բաժնում կային դամբարաններ, որ իսկապես վեհաշուք էին, բայց գոնե մեկ արձանագրություն, մեկ տապանագիր ամբողջ այդ բաժնում չկար (Եվրոպացի ժողովուրդ են, գիր, գրականություն, դպրություն, մշակույթ ունեցող): Մինչդեռ հայկական բաժնում ուղղակի հայերեն արձանագրությունները ծփում էին», - ասաց Սամվել Կարապետյանը:

Հնդկաստանի հայերի առաջին սերունդն է, սակայն, որ տապանաքարերն արձանագրում էր հայերեն: 18-րդ դարի 2-րդ կեսից և մանավանդ 19-րդ դարից հետո հայերեն արձանագրությունները պակասում են, սկսում են գերակշռել անգլերենը, պարսկերենը (քանի որ Հնդկաստանում հաստատված առաջին հայերը նորջուղայեցիներ էին): Կան թիֆլիսահայերի տապանաքարեր, որոնց արձանագրությունները հայերեն ու վրացերեն են:

Հնդկաստանի ոչ բոլոր քաղաքներում է, որ հայերը գերեզմանոց ունեն: Եկեղեցի չունեցող վայրերի հանգուցյալներին տեղափոխել են եկեղեցի ունեցող վայրեր: Օրինակ՝ քանի որ Վարանասի և Կոչի քաղաքները չունեն եկեղեցի, այդ քաղաքների հայ համայնքը գերեզմանոց ևս չի ունեցել:

Սամվել Կարապետյանի խումբը Կալկաթայում էր, երբ իմացավ, որ Դելիում վախճանված մի հայ կնոջ Կալկաթա են տեղափոխել, որ այդ քաղաքի հայկական գերազմանատանն ամփոփեն: Դելիում մի քանի հայ է մնացել: Իսկ Հնդկաստանի հայկական եկեղեցիներ հաճախում են քրիստոնյա, հիմնականում կաթոլիկ հնդիկներ:

Մարդիկ քնում են տապանաքարերի կողքին

Մամվել Կարապետյանի խոսքերով՝ Հնդկաստանի հայկական հուշարձանները ընդհանուր առմամբ լավ վիճակում են և վտանգված չեն: Ինչ ստեղծվել է, կանգուն է: Հնդկաստանում, ինչպես և Իրանում, պետությունը պահպանում և նորոգում է հայկական հուշարձանները: Ագրայի և Սուրաթի գերեզմանոցները, Մադրասի եկեղեցին ու գերեզմանոցը պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում են:

Վտանգված է միայն Դելիի հայկական գերազմանոցը, որտեղ ընտանիքներ են գիշերում: Այդ խնդրով Հայաստանի դեսպանը դիմել է Հնդկաստանի մշակույթի նախարարությանը և պատասխան ստացել, որ 1 մլրդ 200 մլն բնակչություն ունեցող Հնդկաստանում օրենք կա, ըստ որի՝ եթե մեկը մի քանի գիշեր, նույնիսկ առանց վրանի, քնել է ինչ-որ տեղ, ապա իրավունք է ձեռք բերում այդ հողի նկատմամբ:

«Երևի այդտեղ մի 20 ընտանիք էին: Այդ մի քանի մետրի վրա միայն մահճակալներ են, ուրիշ բան չկա: Եվ մահճակալ, տապանաքար, տապանաքար, մահճակալ: Եվ ապրողի իրավունք: Այսինքն՝ մարդը պիտի ապրի: Տեղ չունի, ո՞ւր

ապրի: Պետությունը այդ իրավունքը տվել է: Չեն քանդել, բայց տապանաքարն է, կողքը պառկում քնում են»,- ասաց Սամվել Կարապետյանը:

Հնդիկների ազգային հերոսների մեջ հայեր կան

Պորտուգալացիներից հետո հայերը երկրորդ քրիստոնյա ազգն են, որ հաստատվեցին Հնդկաստանում: Ի տարբերություն պորտուգալացիների, որոնք 16-րդ դարում իրենց ձեռքը վերցրին Հնդկաստանի ողջ ծովային առևտուրը՝ հայերը չբավարարվեցին միայն ծովափնյա քաղաքներով և մտան երկրի խորքերը: Այդ հայերը հիմնականում նորջուղայեցի առևտրականներ էին, որոնք հարմար համարեցին աշխատել Հնդկաստանում: Նրանց առաջին հանգրվանը ծովափնյա Սուրաթ քաղաքն էր: Երկրում գործունեություն ծավալելու համար հարկավոր էր թագավորի թույլտվությունը: Այդ պատճառով Սուրաթից հետո հայերը հաստատվեցին թագավորի նստավայր Ագրայում: «Ազատ առևտրի հետ կապված իրենց ամեն ցանկացածը թագավորից ստանալուց հետո արդեն տարածվեցին երկրով մեկ: 16-րդ դարից Սուրաթում և Ագրայում հայեր եղել են, և

ամենահին 2 եկեղեցիները, որ արդեն 16-րդ դարում եղել են, հենց Ագրայի և Սուրաթի հայկական եկեղեցիներն են: Սակայն այսօրվա դրությամբ Հնդկաստանում և մասնավորապես այս 2 քաղաքներում թե այդ 2 եկեղեցիները չկան, և թե գերեզմաններ: Գոնե մեզ պատահածները այդ վաղեմությունը չունեին», - ասաց Սամվել Կարապետյանը:

Հնդկաստանի հայերը սեր էին վայելում հնդիկների շրջանում, քանի որ ազնիվ ճանապարհով էին հարստացել և չէին կեղեքել: Նրանք, հնդիկ ժողովրդի հետ միասին, պայքարել են Հնդկաստանը նվաճած բրիտանացիների դեմ: Այդ շրջանում հայերն իրենց առևտրական նավերը հարմարեցրել են ռազմական նպատակների և պայքարին մասնակցել ռազմական նավատորմիղով, որոշ հաջողություններ ունեցել: Բայց բրիտանացիները, Հնդկաստանի հարստությանը տիրանալու համար, կենտրոնացրել են այնպիսի ուժեր, որոնց հնդիկները չեն կարողացել դիմադրել և գաղութացվել են: Սամվել Կարապետյանն ասաց, որ նույնիսկ կան հայեր, որոնք գլխավորել են հնդիկների

ազատագրական պայքարը և ստացել հնդիկ ժողովրդի ազգային հերոսի կոչում:

Հնդիկը կարծում է, որ հայերը տարօրինակ ժողովուրդ են

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը վաղուց էր ցանկանում ուսումնասիրել գաղթավայրերի հայկական հուշարձանները, սակայն դրան հերթ չէր հասնում. հիմնադրամը զբաղված էր ուղևորություններ կատարելով Արևմտյան Հայաստան, որը (չխոսած Փոքր Հայքի և Կիլիկիայի մասին) 7 անգամ ավելի մեծ է ներկայիս ՀՀ տարածքից:

Սամվել Կարապետյանի համոզմամբ՝ թեև առաջնային է պատմական Հայաստանի և ՀՀ-ի հուշարձանների ուսումնասիրությունը, սակայն Հայաստանի պատմությունը հնարավոր չէ ամբողջական ուսումնասիրել՝ առանց պատմական գաղթավայրերի պատմության:

Այդպիսի կարևոր գաղթավայրեր են Վրաստանը, Հյուսիսային Կովկասը՝ մինչև Աստրախան, Ղրիմը

մինչև Կարպատներ, Նեղոսի հովիտը մինչև
Եթովպիա կամ Հաբեշտան (Հաբեշտանում հայ
վարդապետների քարոզների արդյունքում
հաբեշների մի մասն ընդունել է Հայ առաքելական
եկեղեցին և այդ գաղափարախոսության ներքո
ստեղծել ուրույն մի մշակույթ):

Այնուհետև շատ կարևոր են հայկական
գաղթավայրերը Միջագետքում, Իրանում,
Հնդկաստանում: Հետագայում հայերն ավելի են
հեռացել դեպի հարավարևելք՝ Հնդկաստան,
Ինդոնեզիայի կղզիները, հասել մինչև Նոր
Զելանդիա և Ավստրալիա: Այս վերջին երկու
երկրի գաղութները հիմնողների առաջին
սերունդները Հնդկաստանից տեղափոխված
հայերն էին:

«Որքան հասկացա, հիացած չեք եկել
Հնդկաստանից: Մենք սովոր ենք Ձեզ տեսնել
հիացած՝ տարբեր վայրերից վերադառնալիս: Դուք
ավելի՞ն էիք սպասում այնտեղից», - Սամվել
Կարապետյանին հարցրեց լրագրողներից մեկը:
Նա պատասխանեց, որ Նոր Զուղայի հայերը
Հնդկաստան գնացին Շահ Աբասի բռնագաղթի
հետևանքով: Երբ նրանք հնարավորություն ունեին
դուրս գալ Նոր Զուղայից, ոչ թե տուն

վերադարձան, այլ գնացին Հնդկաստան: Իսկ հայր Խորենը պատմել է, որ համայնքի անկման շրջանում շատ հնդկահայեր վաճառել են համայնքի ազգային կալվածքները, թեև դրա իրավունքը չունեին, և մեծ հարստություն ձեռք բերած՝ գնացել Ավստրալիա:

«Այսինքն՝ մենք կոչված էինք հավաքելու, պատմության համար ապահովելու հազարներով մարդկանց հիշատակներ, որոնք, ճիշտն ասած, ազգի իմաստով, չէին վաստակել անմահանալու իրավունք: Բայց մենք անմահացրինք, որովհետև մեր գործն է: Եվ դրա համար ուրախություն առանձնապես չեմ ապրում», - ասաց Սամվել Կարապետյանը:

Նա շատ է ուզում, որ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը գնա նաև Հաբեշտան՝ Նեղոսի գետաբերան, և ուսումնասիրի այնտեղի հայկական հուշարձանները:

«Եզիպտահայ գաղութը հին է: Մենք Ալեքսանդրիայում և Կահիրեում ունենք եկեղեցիներ և գերեզմանատներ: Միայն մեկ անուն տամ՝ Համբարձում Երանյան: Երանյան

վարժարանի հիմնադիր վանեցի այդ մարդը թաղված է Ալեքսանդրիայի գերեզմանոցում: Եվ շատ-շատ ուրիշ ազգային նվիրյալներ ունենք: Այ, ավելի խանդավառ կգնամ այս մարդկանց հիշատակները հավաքելու, լուսանկարելու և հասարակության փոխանցելու», - ասաց Սամվել Կարապետյանը:

Նրա խումբը Հնդկաստանի Չինսուրահ քաղաքի եկեղեցուն կից գերեզմանոցում տեսել է Արցախի Գյուլիստան գավառի իշխանների Մելիք-Բեգլարյանների տոհմանական գերեզմանոցը:

Մի հնդիկ ասել է Սամվել Կարապետյանին. «Դուք տարօրինակ ժողովուրդ եք: Թագավոր ունեք՝ Փարիզում է թաղված, իշխաններ ունեք՝ Չինսուրահում են թաղված: Ձեր թագավորն ու իշխանները, ձեր պետությունը թողած, ինչի՞ մասին են մտածել, ո՞ւր են հանգրվանել, ինչի՞ համար»: «Հնդիկ է նկատում սա», - ասաց Սամվել Կարապետյանը:

«Հետք» օն-լայն թերթ

Հայ Կապոյտ Խաչի Ազգային Չաւարեան՝ վարժարանի՝ Հայաստան Ուշագլեան՝ մանկապարտէզի նորակառոյց դասարաններու քացում

2011-03-22

Հայ հասարակութեան ձեւաւորման եղելոյթին վրայ ամենէն ազդեցիկ գործօնն է հայ դպրոցն ու հայ ուսուցիչը՝ որ իրենց փոխանցած մթնոլորտով, գիտելիքով ու շունչով^a հայ ոգիի զարգացման կը նպաստեն: Իրերայաջորդ հայ սերունդներու մօտ ազգային կազմաւորման համար, հայ ընտանիքին առընթեր եւ շատ պարագաներու հայ ծնողներէն ալ աւելի, ուսուցիչն է՝ որ կրնայ ճակատագրական դեր խաղալ ապագայ հայ մարդուն կերտման գործընթացին մէջ:

Այս իմաստով, երէկ տեղի ունեցած Հայ Կապոյտ Խաչի Գոքինիոյ Ազգային Չաւարեան՝ վարժարանի՝ Հայաստան Ուշագլեան՝ մանկապարտէզի նորակառոյց սրահներու քացումը^a տօն եւ նուիրական օր էր գոյգ իմաստներով, որ ուրախութեան եւ հպարտութեան զգացումներով համակեց բոլորը:

Յունաստանի թեմակալ առաջնորդ Տ. Խորեն եպս. Տողրամաճեանի նախագահութեամբ տեղի տեղի ունեցաւ բացման արարողութիւնը: Ներկայ էին Յունաստանի մօտ ՀՀ դեսպան պրն. Գագիկ Ղալաչեանը, Յունահայոց Ազգային Վարչութեան եւ Հայ Կապոյտ Խաչի Շրջանային Վարչութեան անդամները, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամները, հայ աւետարանական համայնքի վերապատուելի Վիգէն Չոլաքեանը, կրօնից դասը, Ուսումնական եւ Տնտեսական Խորհուրդներու անդամները, ազգային մարմիններու մէջ ծառայած հին թէ նոր անդամները, Հայ Դատի Յանձնախումբի եւ շրջաններու կոմիտէութեանց անդամները, հայ ազգային վարժարաններու տնօրէնները եւ ուսուցչական կազմը, Հայ Կապոյտ Խաչի բարերարները, մեծ թիւով հայրենակիցներ եւ ծնողներ: Ներկայ էր նաեւ երկօրեայ այցելութեամբ Աթէնք գտնուող Ընկերվար Միջազգայնականի նախագահող խումբին մասնակցող ՀՅԴ ներկայացուցիչ ընկ. Մարիա Թիթիզեանը:

Բացման արարողութեան ներկայ գտնուեցան նաեւ յոյն երեսփոխաններ Անասթասիոս Ներանձիս, Իոանիս Թրադաքիս, Ղրիդորիս

Նիոթիս, Փիրեայի մարզպետի խորհրդական պրն.
Պենեթոս եւ քաղաքապետական խորհուրդի
նախագահը, Նիքեա-Ռենտիի քաղաքապետարանի
փոխ քաղաքապետներ Փաւլոս Պիխթաս եւ
Միխայիս Քուֆոփանտելիս, քաղաքապետական
խորհուրդի անդամ տիկին Էլէնի Ռումեանը,
Փիրեայի նահանգապետարանի կրթական տնօրէն
Միխայիս Տեքենլիս, նախկին տնօրէն Տիմիթրիս
Չողոեանիս եւ Փիրեայի կրթական Բ. գրասենեակի
պատասխանատու պրն. Փանտիորաս:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ուսումնական
Խորհուրդի ատենապետուհի տիկին Էլի
Մինասեան-Մովսէսեանը որ ամփոփ պատմական
մը կատարելով, անդրադարձաւ Գոքինիոյ մէջ,
1927ին, վարձուած շէնքի մը մէջ հաստատուած
'Հռիփսիմեանց' վարժարանին եւ իր առաջին
մանկապարտիզպանուհի Հայաստան
Ուշագլեանին: 'Ջաւարեան' վարժարանի
մանկապարտէզը այն օրէն ի վեր գործեց շէնքային
տարբեր պայմաններու տակ, մինչ հետզհետէ
աւելի հրամայական կը դառնար նոր լուծումի մը
առաջնորդուելու անհրաժեշտութիւնը:

Այսպէս Հայ Կապոյտ Խաչի եւ Ազգային

Վարչութեան գործակցութեամբ կարելի եղաւ իրականացնել երկար տարիներու երազ մը, նոր շէնք կառուցելով Ս. Յակոբ եկեղեցւոյ կողքին: Այս բազմաձախս ծրագրի իրագործման մեծապէս նպաստեց պրն. Անդրանիկ Չաքալեանի նուիրատուութիւնը, ինչպէս նաեւ Կիւլպենքեան հաստատութեան նիւթական յատկացումը:

Տիկին Մովսէսեան շնորհակալական խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք աշխատեցան այս ծրագրի իրականացման համար, յատուկ նշելով տիկին Ազնիւ Առաքելեանի եւ պրն. Դաւիթ Պետրոսեանի սիրայոժար աշխատանքը: Ան մեծապէս գնահատեց մանկապարտիզպանուհիներու եւ ուսուցիչներու տարած աշխատանքը, որոնք իրենց տրամադրուածութեան եւ խանդավառութեան առընթեր, յետայսու յարմարաւէտ պայմաններն ալ պիտի ունենան կարելոր իրենց աշխատանքը կատարելագործելու համար:

Ապա հրաւիրեց Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի ատենապետուհի ընկ. Լիզա Աւագեանը իր խօսքը ուղղելու:

Յաջորդաբար ընկ. Էվա Պերպէրեան ընթերցեց ՀՀ

Սփյուռքի նախարարի տեղակալ պրն. Ստեփան
Պետրոսեանի կողմէ ուղարկուած
շնորհաւորական նամակը:

Չան արեւ, մեր դպրոցին տուր բարեւ՝

Մանկապարտէզի փոքրիկ աշակերտները երգերով
եւ արտասանութիւններով հանդէս եկան, իրենց
ուսուցչուհիներու հսկողութեան տակ եւ տիկին
Գոհար Ճիմանեանի խմբավարութեամբ ու
դաշնակի ընկերակցութեամբ: Ուրախ եւ ժպտուն
իրենց երեսներուն վրայ յայտնի էր
գոհունակութիւնը իրենց նոր մանկապարտէզի
բացման առիթով: Չան արեւ, մեր դպրոցին տուր
բարեւ: Թող ամէն տեղ լսուի որ մենք հո՞ւ ենք՝
երգեցին փոքրիկները, մեծ ոգեւորութիւն
ստեղծելով ներկաներուն մօտ:

Սրբազան հօր խօսքը

Ապա խօսք առաւ Յունահայոց առաջնորդ Տ. Խորէն
Ս. եպս. Տողրամաճեան, որ մեծապէս գնահատեց
շէնքի կառուցման աշխատանքը. Ականատես ենք
բոլորիս համար ողջունելի իրողութեան մը. երազ
մը, նպատակ մըն է որ կ'յիրականանայ այսօր,

շքեղ, նորակառոյց, օրինաւոր շէնքի բացումով՝
ըսաւ սրբազան հայրը:

Ան շարունակեց իր խօսքը նշելով, թէ մանկապարտէզները կը դառնան այն հողը, ուր հայ մանուկը կը ծանօթանայ Մեսրոպ Մաշտոցի տառերուն, որ հետագային իր գէնքը պիտի դառնան, հայութեան դէմ ցցուող բոլոր դժուարութիւններու դիմագրաւման դժուար գործին մէջ: Պատիւ մեր ժողովուրդին, մեր կառոյցներուն, որ հակառակ Սփիւռքի մէջ տիրող կացութեան, այսօր կը յաջողինք նոր մանկապարտէզ մը բանալու՝ ըսաւ սրբազան հայրը, աւելցնելով թէ մեր բոլոր միութիւններու անդամները եւ վարչականները գաղութին ծառայելու իրենց առաջին առաքելութիւնը կը ստանան հայկական մանկապարտէզէն դուրս գալով: Ան հանգամանօրէն անդրադարձաւ նաեւ նուիրուած մանկավարժին^a Հայաստան Ուշագլեանին, որու անունը կրելով նորակառոյց մանկապարտէզը խորհրդանշական այն վայրը կը դառնայ, ուր Հայաստան եւ դպրոց կը նոյնանան:

Սրբազան հայրը շնորհակալութեան խօսք ուղղեց Յունաստանի պետական, նախարարական

շրջանակներուն, ազգային-կուսակցական կառոյցներուն, միութիւններուն եւ հայ ժողովուրդին, որոնց ներդրումով կառոյցները կը պահպանուին ու կը շէնանան:

Այս օրը, մեր գաղութին համար նշանակալից եւ խորհրդանշական օր մըն է, որովհետեւ ականատես կ'ըլլանք նախաձեռնութեան մը, որ կը միտի անցեալը ներկային եւ ներկան ապագային շողկապելու ակնկալիքի մը^a Հայ Կապոյտ Խաչի 'Հայաստան Ուշագլեան' մանկապարտէզի նորակառոյց շէնքի բացմամբ: Եղելութիւն մը, որ կը դնէ մեզ բոլորս նոր յոյզերու եւ նոր յոյսերու առջեւ, միաժամանակ սակայն նոր ակնկալութիւններու եւ նոր գրաւներու դիմաց:

Կարելի չէ այս պահուն յետադարձ ակնարկ մը չնետել մեր անցեալին եւ չխոնարհիլ անյայտ ու յայտնի մեր հայրենակիցներուն յիշատակին, որոնք ջարդերէն հազիւ ազատած ու կայք հաստատած Յունաստանի հիւրընկալ հողին վրայ, շնորհիւ իրենց ամուր կամքին ու ազգովին գոյատեւելու հաւատքին, կրցան առանց որեւէ պետական օժանդակութեան եւ աներեւակայելի գոհողութիւններով^a հիմը դնել հայ դպրոցին,

հայկական եկեղեցիին, կազմակերպություններուն ու հաստատություններուն, որպէսզի օտարութեան մէջ հասակ նետող մատղաշ սերունդները հայեցի դաստիարակութիւն ստանան ու մեծնան որպէս հայեր:

Հայ Օգնութեան Միութեան միաւորներ ստեղծուած են միշտ հոն ուր հայ ազգը կարիքը զգացած է: Այսպէս է ուրեմն որ, 1924-ին, հիմը կը դրուի նաեւ^a Յունաստանի Հայ Կապոյտ Խաչին, հոգալու համար տասնեակ հազարներով գաղթականներու եւ որբերու կարիքները:

Բարեսիրական եւ խնամատարական իր գործունէութենէն անդին, Հ. Կ. Խաչը գիտակից հայապահպանման իր առաքելութեան աշխատանքի դաշտը կ'ընդլայնէ նա^oեւ մշակութային եւ կրթական մարզէն ներս: Այսպէս 1927-ին, Հ. Կ. Խաչի անուան կը հիմնուի 'Զաւարեան' նախակրթարանն ու մանկապարտէզը, ամրոց մը ուր եկող սերունդները պիտի զինուին ազգային գիտակցութեամբ ու պիտի պահեն ազգի ժառանգուածը^a լեզուն, պատմութիւնը, աւանդութիւնները, վերջապէս ազգային արժէքները:

Մեր պատմութիւնը ցոյց տուած է, թէ ստեղծուած պայմաններուն համաձայն հայը պարտաւոր է ձեւեր որոնել ազգովին վերապրելու համար:

Այսպէս, սփիւռքահային պարտադրուած իրավիճակը պէտք չէ յուսալքէ մեզ:

Իրողութիւն է թէ, եթէ ազգովին ապրելինք մեր հայրենիքին մէջ ու վայելելինք հարազատ մեր պետութեան հովանաւորութիւնը, մե-րօրեայ շատ մը բարիքներ ու հարցեր գոյութիւն կրնային չունենալ: Սակայն քանի մեր ժողովուրդի կէսէն աւելին կ'յապրի հայրենիքէն դուրս, մեր ազգային-հասարակական-եկեղեցական մարմիններու ուսերուն կը ծանրանան, իբրեւ հայ, մեզ յատկանշող երեւոյթներու եւ տուեալներու պահպանումը:

Հ. Կ. Խաչը գիտակից է այս կացութեան եւ պատրաստ է միշտ օժանդակելու ամէն ձեւով, բարոյապէս թէ՞ նիւթապէս: Ան կը տարբերի այլ մարդասիրական-բարեսիրական կազմակերպութիւններէ պարզ այդ պատճառով, որ անոր էութեան ու գոյութեան պատճառը ազգին

ծառայելն է եւ հետեւաբար հայ ժողովուրդի գոյութեան մտահոգութիւնը նա՞եւ իր գործունէութեան առանցքը դարձուցած է:

Հայ Կապոյտ Խաչը գիտակից է նաեւ, թէ ժամանակները փոխւած են: Հետզհետէ համաշխարհայնացումը իր բերած դրական ազդակներէն անդին, ժխտական մեծ անդրադարձ կը յառաջացնէ, նա մանաւա՞նդ փոքրամասնութիւններուն: Պէտք է դիտարել ծանր ու դժուարին հոսանքներուն դէմ:

Այս պայքարին մէջ իւրաքանչիւր հայ անհատ պարտաւոր է իր բաժինը բերելու, հաւատալով թէ միութեան ու կազմակերպուածութեան մէջ է առաւելաբար գործի յաջողութիւնը:

Կը մտադրեմ, որ այսօրուայ ‘Հայաստան Ուշագլխան’ մանկապարտէզի նորակառոյց շէնքի բացումով^a առիթ մը ըլլայ բոլորիս համար^a մեր ուժերն ու հաւատքը վերանորոգելու, համոզուած ըլլալով որ ժամանակներու ընկերային թէ տնտեսական դժուարութիւնները մեզ պէտք չէ յուսալքեն, շարունակելու համար մեզի վստահուած ժառանգը, հոգ չէ թէ շատ աւելի քարքարոտ եւ

դժուար պայմաններու մէջ:

Վերջացնելով, պիտի ուզէի շնորհաւորել Ազգային Վարչութիւնը եւ իր խորհուրդները իրենց առած նախաձեռնութեան համար, եւ պիտի ուզէի մաղթել մեր նոր ուսուցչուհիներուն որ մանկապարտիզպանուհի եւ տիպար հայուհիի^a Հայաստան Ուշագլեանի ազգային ոգիէն ու շունչէն տոգորուած^a շարունակեն իրենց դժուար առաքելութիւնը:

Ստորեւ կը հրատարակենք ՀՀ Սփյուռքի նախարարութեան նախարարի տեղակալ պրն. Ստեփան Պետրոսեանի կողմէ ուղարկուած շնորհաւորական նամակը

**Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի
Շրջանային Վարչութեանը
'Զաւարեան' Ազգային
Վարժարանի Տնօրէնութեանը**

Յարգելի հայրենակիցներ,

Ուրախութեամբ տեղեկացանք, որ օրերս տեղի է

ունենալու Աթենքի՝ Չաւարեան՝ ազգային վարժարանի՝ Հայաստան Ուշագլեան՝ մանկապարտէզի նորակառոյց դասարանների բացումը, ինչի առիթով ձեզ ենք յղում մեր ջերմ շնորհաւորանքները:

Մա ոչ միայն կարելու իրադարձութիւն է Յունաստանի հայ համայնքի կեանքում, քանի որ կարելու հիմք է հայ երեխային հայկական ազգային մտածելակերպով դաստիարակելու համար, այլեւ հայ ինքնութեան եւ հայկական արժէքների պահպանման ձեր մեծ նուիրումի վառ ապացոյցն է:

Յաճախելով հայկական մանկապարտէզ^a հայ մանուկներն իրենց հոգիներում մշտապէս կը պահպանեն դեռ փոքրուց ստացած սերը Հայրենիքի, հայկական արժէքների եւ մայրենի լեզուի հանդէպ:

Կրկին անգամ շնորհաւորում եմ ձեզ, մանկավարժներին, բարերարներին, ծնողներին եւ երեխաներին այս ուրախառիթ իրադարձութեան կապակցութեամբ եւ մաղթում անսահման եռանդ, նուիրում ու սէր^a Յունաստանի հայ համայնքի

Կեանքում ձեր նուաճումները զարգացնելու եւ
բազմապատկելու հայրենանուէր գործում: